


1914, էջ 571), Գոմբի Ս. Գեորգի համա- Արարատ, 1907, էջ 531). Ս. Բարթուղի- մէնսի մէջ (Հանդ. Ամս. 1942, էջ 195) եւն եւն⁶⁴ վարժարաններ եւ որբանոցներ կը բացուին:

25. ՀԻՒՐԸՆՎԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԶԲԱՂՈՒՄ- ՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԵՐ

Կային վանքեր, որոնք նուիրուած էին բնակչին օգտակար ըլլալու՝ ամէն տեսա- կէտով մանաւանդ հող հողացող եւ հիւ- բնակալութեամբ: «Այդ վանքերը (Վասպու- րականի) ոչ միայն աշխարհուրաց հայ վանականներու բնակավայրեր եւ աղօթա- տեղիներն եղած են, ոչ միայն կրօնական



Նարեկայ վանքը

ուխտեր եւ սրբավայրեր, այլ տեսակ մը բարեգործական հիմնարկութիւններ, որոնք բարոյական պարտականութիւն ու- նէին ապաստանարան տալ ճամբորդներուն, ինամ եւ հողացողութիւն աղքատներուն եւ որբերուն»⁶⁵: Քանի մը վանքեր ունէին հիւրերու յատուկ բնակարաններ՝ «ճանա- պարհորդաց հանգստարան»⁶⁶ (Ասողիկ, էջ մանաւորապէս յիշատակելու է Փութիկի 174, հմմտ. Ասատուրի յօդուածը՝ Մասիս, 1892, Թ. 3960, էջ 78): Այս տեսակէտով

⁶⁴ Վարդի վանքը թէ միաբնութեամբ եւ թէ վարժարանով օժտուած էր (Վ.Վ.Վ., Ա., էջ 335. Բիւ- ղանդի, 1900, Թ. 1143), ինչպէս վերջիւնուած վան- քերէն ոմանք: Կոտուպալ գիւղի Ս. Սաչ վանքի վա- նահայրը Մելքիսեկ նպատակ ունէր զայն նորոգել վերջ՝ հոն ժառանգաւորաց վարժարան մը բանալ (Արծ. Վասպ., 1864, էջ 142):

⁶⁵ Աճէմեան Հ., Հայոց Հայրիկը, Քաւրի 1929, էջ 129—130: Սոյն գրքի մէջ հակիրճ տողեր նուի- րուած են Ս. Բարթուղիմէոսի, Հոգեաց, Չաղար Ս. Նշանի, Աղթամարի, Նարեկի, Զանկայ Ս. Աստուա- ծածնի, Վարդի, Կառուցի եւ Լիմի վանքերու մասին (հմմտ. էջ 130—132):

⁶⁶ «Վանք շինեցան ի գիւղս, զի անդ հանդիցն առաջնորդք եկեղեցւոյ եւ հիւրք եւ աղքատք...» (Է. Կան. Պարտաւի, հմմտ. Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 167):

Ս. Գեորգի վանքը: Իսկ բոլոր վանքերը օժտուած էին ուխտաւորներու համար կա- ուցցուած սենեակներով: Միաբաններու պարտքն էր զանոնք հիւրասերել եւ անոնց նեցուկ ըլլալ, եթէ նիւթապէս ոչ՝ դոնէ բա- րոյապէս:

Վանականները մտքի ցրումի եւ նմա- նապէս ապրուստ ճարելու համար՝ արտա- քին ու մարմնական աշխատանքի եւս կը լծուին՝ մշակութեամբ եւ երկրագործու- թեամբ կը զբաղին (Լասարիւբրտացի Ա., Պատմ. Հայոց, Վենետիկ, 1910, էջ 31): Այդպէս ճարտարութիւնը ուրիշ ամէն գործէ դե- րադաս կը համարին: Ոմանք չափազանցու- թեան մէջ դարահոս՝ վաճառականութիւն իսկ կ'ընեն (Ն. Ծնորհալի, Ընդհ. Թուղթ, էջ 70—82):

26. ՍՐԵՄ (ՎԱՄ ԶԳԵՍՍ)

Ճգնաւոր-վանականին զգեստը կամ սքեմը նախապէս աշխարհականէն կը զա- նազանուէր ու կը տարբերէր ոչ այնքան ձե- ւով, որքան նիւթով ու պարզութեամբ: Եղիշէ «հարաւային» միանձնեւոր տարազը կը ներկայացնէ՝ «Առնեն եւ նոքա հան- պերձս անպաճոյճս եւ յոյժ դձուճս ամա- րանի եւ թեզանաւորս ձմերանի, արկանեն եւ աղարողոնս մեկնաւորս» (Մատենագրու- թիւնք Եղիշէի, էջ 159): Անոնք սքեմին կը նմանէր հայ անապատականին զգեստը, որ Հ. Հացունիին ազգային մատենագրութեան հաւաքած աղբիւրներու համեմատ՝ էր թաշ- կինակ մը գլխուն՝ կողոքն մաշկէ («մաշ- կահանդերձ», «լեշկմաշկ») կամ այծի մաշկէ («խարաղիաղեաց», «խորգահան- դերձ», «մաղեղէն», նաեւ՝ «ցիսի», «կա- շեղէն») մարմնոյն վրայ. երկաթեայ կամ մաշկեղէն («փոկ») դօտի մէջքին շուրջը, եւ սանդալ («հողաթափ») ոտքերուն՝ նըր- աններուն տակ, սակայն աւելի սովորա- կան՝ բոկազնաց: Իսկ աշխարհիկ մեկնոցին կը համապատասխանէր մաշկեղէն վերար- կուն՝ արկանելին կամ նափորտը, զոր վրան կը նետէր, երբ ճգնարանէն դուրս ելլելու հարկ ըլլար: Անապատականին սքեմը յե- տոյ վանականը⁶⁷ կը ժառանգէ, բայց նիւ-

⁶⁷ Եղիշէ Վարդանանց շրջանին վանականներու տարբեր զգեստ կամ սքեմ գիտէ: Պարսից թագաւորը կը հրահանգէ՝ «Եւ հաւատացեալքն ի քրիստոս արք եւ կանայք փոխեցեն զհանդերձս իւրեանց ըստ աշ- խարհական կարգաց» (Մատենագրութիւնք, էջ 40):

թի եւ ձեւի որոշ փոփոխութեամբ: Հայ մո- նոպոն ու կրօնաւորը՝ վանական վիճակին մէջ կը մտնէ զրկուելով բնութեան պար- դեւած գեղեցիկ զարդերէն՝ մաղերէն եւ հերազուրկ զլուխը կը ծածկէ՝ գտակով կամ կնդուղով կամ քուսիթայով կամ վեղարով կամ սաքուլայով: Կը զգենու պարեգօտ կամ երիճաղ կամ պատմուճան, նափորտ, այս է «բաճկոն չորեքկուսի, խրացիւք պնդեալ զլանջան, անաղափն՝ ուսնոցակ՝ փիլոն»:⁶⁸ Մէջքը կ'ամրացնէ դօտիով եւ ոտքերուն հողաթափ կ'անցնէ: Ստակեաց վանականը միշտ անպաճոյճը, մարմինը ձաղկոզ ու տառապեցնող նիւթն ու ձեւը կը նախասիրէ: Ըստաճը կ'արժէ արտաքին ու ներքին ա- գանելիքներու համար՝ միանգամայն (հմմտ. մանրամասնօրէն Հացունի Հ. Վ. Պատմու- թիւն հին հայ տարազին. Վենետիկ 1923, էջ 414—434, ուր եւ հայ հաւատաւորներու կամ կուսաններու տարազն ու սքեմը, էջ 434—442. հմմտ. եւ Արարատ, 1905, էջ 548—551):

Առաքել Դաւրիթեցի կը հաւաստէ թէ՛ վանական կեանքի վերանորոգողները՝ Սար- գիս եւ Կիրակոս «Այլ եւ զորպիսութիւն եւ զձեւ զգեստուցն գտին ի գրոց. զքուսիթայն որ է զլիսոյ թօփին եւ զքառակուսին եւ զսքեմն եւ զցպսիսն, որ է մաղեղէնն, ի ներքոյ զգեստուցն ի վերայ մերկ մարմնոյն եւ հասարակ ամենեցուն զգեստն բովան- դակ ասուեղէն լիցի եւ ոչ բամբակեղէն եւ զասուեղէն շապիկն երկայն պղնձաւոր առ- նել մինչեւ ի յոտն եւ դօտի մաշկեղէն: Եւ սահմանեցին թէ՛ իւրաքանչիւր ոք իւրովք զգեստուքն շրջեցի, եթէ միայնակեաց իցէ՝ քուսիթային եւ քառակուսով, եթէ երէց իցէ փիլոնան, եթէ արեղայ իցէ փիլոնան եւ վեղարան: Այս կրօնաւորական զգեստ ամենեւին անհետ լեալ էր. եւ այժմ սոքա գտին. իսկ վեղարն եւ փիլոն թէպէտ գոյր, այլ միայն ի ժամ աղօթիցն զգենուին եւ զկնի արձակման ժամուն ի բաց եղեալ յինքեանց եւ իրեւ զաշխարհական շրջէին» (Պատմ., էջ 257):

Ներսէս Մոկացի, Լիմի վերանորոգիչ առաջնորդը իր մասին կ'արտայայտուի՝

«Արբայ անուն առի, յաշխարհէ ձեւով մեկնեցայ, Որպէս խաչ ուսով բարձեալ խաչելոյն հե- տեւեցայ.

Արկայ ստորոտով հանդերձ, ժուժկալի կեր- պիւ յայտնեցայ... Կընկըղովս խորհայեաց հեղ հարանցն նմա- նեցայ...»

Ծայրասուր սաղաւարտեալ՝ եթէ այսպէս միշտ վեր խոկայ...

Ուրար եւ փիլոն արկեալ՝ թէ լծովս խոր խոնարհեցայ,

Որպէս սղաւոր դուրով սեւա համակ անձամբ գունեցայ

Եւ սիրամարգի նման սիգալով փերեւեթե- ցայ...»

(Ալիշան, Սիսական, էջ 248, ծան. 2):

Վասպուրականի վանքերու — յատկա- պէս Լիմի — վերանորոգուած այս սքեմն ու զգեստը երկարատեւ մնաց անոնց մէջ եւ միաբաններն էին՝ «հանդերձիւք խոշորա- կան» (Ալիշան, Հայապատում, Գ., էջ 351), «խարաղնաղգեստ» (Վ.Վ.Վ., Ա., էջ 12, 39, 77. Դիւան, Զ., էջ 103): Սարգիսեան կը վկայէ՝ «Զգեստ նոցա ցիսի խոշոր» (Տեղա- գրութիւնք, էջ 271):

27. ՎԱՆՔԵՐՈՒ ՄՈՒՏՔԵՐ

Ճգնաւորներն ու վանականները, որպէս զի կարենային ապրիլ եւ իրենց գծած ու հե- տապնդած նպատակներուն դիւրաւ հասնիլ, պէտք ունէին նիւթական միջոցներու — զրամի եւ գոյքի ու հողի⁶⁸: Եւ զանոնք կ'ունենան ձեռքի աշխատանքով, մտքի ար- դիւնաւորութեամբ եւ մանաւանդ ժողո- վուրդի առատաձեռնութեամբ:

Կանխենք ըսելու որ՝ հայ վանքերը, եթէ ոչ միշտ, բայց երկար ժամանակով (երբեմն սկսած ու ընդհատուած եւ ապա նորէն շա- բունակուած) տուրք տալու՝ հարկ վճարե- լու պարտքն զերծ մնացած են, թէեւ այդ անուրին տակ ալ տառապած են⁶⁹: Այս- պէս՝ Ս. Սահակի ընծայուած կանոններու մէջ կայ՝ «Վասն այսորիկ ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց սահմանս ընկալա- եւ անդա» (Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 34. հմմտ. եւ Մելիք-Թանգեան, Հայոց եկեղ.

⁶⁸ Միաբաններու արգիլուած էր «առանձին իրս... ստանալ» (Կիրակոս, Պատմ., էջ 83):

⁶⁹ Գենչապուհ «միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս բնդ նովին աշխարհազբաւ էարկ» (Եղիշէ, Պատմ., էջ 19), այս է հարկի տակ զբաւ (Չամչեան, Պատմ. Հայոց, Բ., էջ 24—25): Վասպուրականի վանքերը մահմետական լուծի տակ տուրքէ շատ կը տառապին (հմմտ. Վ.Վ.Վ., Ա., էջ 47 եւ Արձագանք, 1882, էջ 313):

Ոչ թէ միայն հետաքրքրական, այլ նմանապէս շատ կարեւոր է ուսումնասիրութիւնն ու նկատողութիւնը այն մասունքներու եւ նշխարներու, որոնք Հայաստանի դանազան վայրերու մէջ դրոշմուած են եւ եկեղեցական կանոններու եւ ժողովրդական սովորութիւններու (ու նաեւ աւելորդապաշտութիւններու) համեմատ յարգուած: Անոնք մասնաւորապէս եկեղեցիներու եւ վանքերու մէջ կը պահուէին, թէեւ դոյզն չէր թիւը այն անհատներու, որոնք նշխարներ իրենց օձախին ու յարկին պաշտպան ունէին եւ անոնց վրայ տան անդամի նման կը դուրսդուրային: Ընդհանրապէս յարգի մետաղներէ շինուած անօթներու կամ ընդունարաններու մէջ կը գետեղուէին եւ դանազան յարգի քարերով (երբեմն եւ կեղծ) կը պճնազարդարուէին: Դարձեալ՝ ազնիւ եւ ճարտար մատերով ճաշակօրէն բանուած յարկերու եւ շղարչերու մէջ կը ծածկուէին: Տօնական օրերուն, ուխտագնացութեան ժամանակ եւ ծանր պատահարներու ատեն, մանաւանդ հիւանդութեան պարագային, ժողովուրդին կամ կարօտեալին առջեւ կը դրուէին յարգանքի եւ համբոյրի համար:

Հայաստանի եւ անոր ընդարձակ նահանգներէն մէկուն՝ Վասպուրականի մէջ տարածուած եւ մեծարուած են յատկապէս Ս. Խաչի մասունքներ եւ այն թուով որքան շատ եւ ինչպիսի՜ հրաշալի պատմութիւններով բերնէ բերան, գրէ՛ գրէ՛ ներդրուած: Այս նկատի առնուած են Քրիստոսի հետ՝ մանաւանդ անոր չարչարանքներու հետ՝ յարաբերութիւն ունեցող ուրիշ առարկաներ՝ գեղարդ, բեւեռ եւն եւն, դարձեալ Ս. Աստուածածնի գործածած առարկաներ եւ սուրբերու մարմիններու այլ եւ այլ մասեր — զլխաւորաբար Յովհաննէս Մկրտիչի, Ստեփանոս Նախավկայի եւ Գրիգոր Լուսաւորչի մասունքներ:

Վասպուրականի վանքերու եւ անոնց եկեղեցիներու մէջ պահուած ու յարգուած նշխարներու եւ մասունքներու պատկերն է՝

Առաքելոց ոտքը լուսու տաշտը՝ Բուստի Ս. Նշանի մէջ (Վ.Վ.Վ., Բ., էջ 730):

Ս. Աստուածածնի լաշակը՝ Խաթուն Տիրամօր վանքի մէջ (անդ Ա., էջ 353). պատկերը՝ Հոգեաց վանքի մէջ (Հանդ. Ամս. 1942, էջ 171 եւ 179 եւ Արարատ, 1899, էջ 118) քոյր՝ Անդրայ Ս. Աս-

տուածածնի մէջ (Հանդ. Ամս. 1942, էջ 63):

Ս. Արիստակէսի աջը՝ Ս. Յովհաննէսի վանքի մէջ եւ ապա Կարմիր վանքը (Վ.Վ.Վ. Ա., էջ 503, 527):

Ս. Բարթողիմէոսի մասունք՝ համանուն վանքի մէջ (Հանդ. Ամս. 1942, էջ 184): Գամաղիէլի գլուխը՝ համանուն վանքի մէջ (Հանդ. Ամս. 1943, էջ 78):

Գասպար թաղաւորի մասունքը Ծպատի մէջ (Հանդ. Ամս. 1943, էջ 63):

Ս. Խաչի կամ Ս. Նշանի կամ կենաց փայտի մասունքներ՝ Աղթամարի (Վ.Վ.Վ. Ա., էջ 101, 109), Կարմիր (անդ էջ 184), Չորար Ս. Նշանի (անդ էջ 209 հմմտ. եւ Հայրենիք 1893, Թ. 527), Ս. Խաչի (անդ էջ 284), Վարդի (անդ էջ 271, 280—281, 289, 295, 322), Սքանչելագործի (անդ, Բ., էջ 445), Կարմիր, (անդ էջ 527) Աղուլիսի (անդ էջ 684), Հոգեաց (Հանդ. Ամս. 1942, էջ 172), Ճպրայ (անդ էջ 195), Շինի ձորի Ս. Խաչի (անդ, 1943, էջ 86), Խոսրովային Ս. Նշանի (անդ 1943, էջ 91), Ս. Կանանց (անդ էջ 92), Ապարանից (անդ էջ 66, 68), Գոռլի (անդ էջ 84), Ուրնկայ Ս. Նշանի (Վ.Վ.Վ. Բ., էջ 443) Գինիբեր եւ Մանուկ Ս. Նշանի (անդ էջ 416, 418) Կարմրակ Ս. Աստուածածնի (Մասիս, 1892, էջ 110, հմմտ. եւ Վ.Վ.Վ. Ա., 185) վանքերու մէջ:

Ս. Կարապետի՝ Կոռլի (Վ.Վ.Վ. Ա., էջ 53), Սորբայ Ս. Կարապետի (անդ էջ 181—183), Մաղարդայ Ս. Նախավկայի (անդ Բ. էջ 546), Ս. Կանանց (Հանդ. 1943, էջ 92) վանքերու մէջ:

Գայեանեանց՝ Ս. Թովմասի մէջ (Վ.Վ.Վ. Բ. էջ 684):

Գեղարդ՝ Անդրայ եւ Հոգեաց վանքերու մէջ (Հանդ. Ամս. 1942, 163 եւ 171):

Ս. Գէորգի՝ Լիմի (Վ.Վ.Վ. Ա. էջ 5 եւ 49, հմմտ. եւ Ս. Սահակի մասունքը) Ականից Ս. Գէորգի (անդ, Բ. էջ 387), Գոմքի Ս. Գէորգի (անդ Ա. էջ 216) եւ Շուշանից Ս. Գէորգի մէջ (անդ էջ 256):

Ս. Գրիգոր Լուսաւորչի մասունքներ եւ գործածած առարկաները՝ Աղթամարի (անդ, Ա. էջ 109), Չորոյ վանքի մէջ (անդ էջ 253, ծն. 10):

Գրիգոր Ծերենցի՝ Յիպնավանք (Վ.Վ.Վ. Ա. էջ 137):

Գրիգոր Նարեկացիի՝ Նարեկի վանքի մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 191. հմմտ. Արեւելք 1893, Թ. 27, 58):

Եղիշէի՝ Չորար Ս. Նշանի մէջ (Վ.Վ.Վ. Ա. էջ 206. հմմտ. Նոր Հոսանք 1914, էջ 575 էջ 206), Չորավանքի մէջ (Վ.Վ.Վ. Ա., 148, հմմտ. Հանդ. Ամս. 1943, էջ 85):

Ս. Թովմաս Առաքելի՝ Ս. Թովմասի (Վ.Վ.Վ., Ա., էջ 149), Նարեկի (անդ, էջ 192) եւ Աղուլիսի Ս. Թովմասի վանքերու մէջ (անդ էջ 684, 698):

Իւրի շիշ՝ Անդրայ Ս. Աստուածածնի մէջ (Հանդ. Ամս. 1942, էջ 163):

Հաղարաց՝ Մաղարդայ Նախավկայի վանքի մէջ (Վ.Վ.Վ., Բ., էջ 529):

Հոփսիմեանց՝ Աղթամարի եւ Աղուլիսի Ս. Թովմասի վանքերու մէջ (Վ.Վ.Վ. Ա., էջ 109, 259, Բ. էջ 698):

Մարի(ա)նոսի՝ համանուն վանքի մէջ (Հանդ. Ամս. 1942, էջ 181):

Յակոբ Ովսաննացի նահատակի՝ Նարեկի մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 143):

Յակոբ Մճրնացիի՝ Կապուտկողի Ս. Յակոբայ (հմմտ. Արեւելք 1887 Թ. 957) Նարեկի եւ Աղուլիսի Ս. Թովմասի վանքերու մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 163—165, 192, Բ., 684):

Յիսուսի մաղերը՝ Ծպատի վանքի մէջ (Հանդ. Ամս. 1943, էջ 63):

Յուսկան որդւոյ՝ տե՛ս Տէր Յուսկան որդւոյ:

Նոյեան տապանի՝ Կապուտկողի Ս. Յակոբի եւ Աղուլիսի Ս. Թովմասի վանքերու մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 163, Բ. 698):

Ս. Սահակ Պարթեւի՝ Լիմի մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 49, հմմտ. եւ Բիւզանդիոն, 1911, Թ. 4366 եւ ոչ թէ 4368):

Լուսապտուղ Ս. Սահակի՝ Կարմրակի մօտ (Վ.Վ.Վ., Ա., էջ 157):

Ս. Սանդուխտի (գերեզմանը) Նարեկի մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 191—192):

Ս. Ստեփանոս Նախավկայի՝ Կարմիր վանքի մէջ (անդ Բ. էջ 526):

Ս. Վարդանի՝ Արտաղի Ս. Թաղէի, (Վ.Վ.Վ., Բ., էջ 499) Աղուլիսի Ս. Թովմասի մէջ (անդ, էջ 698) եւ Ս. Վարդանի մէջ (անդ, Ա., էջ 182):

Տաշախի (Յիսուսի) մասեր Շուխարայ Ս. Աստուածածնի եւ Սքանչելագործի մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 205, Բ., 445):

Տէր Յուսկան որդւոյ՝ Արդեւանի մէջ (Վ.Վ.Վ., Ա., էջ 362, 387):

Բագմաթիւ նշխարներ⁷⁶ Մաղարդայ եւ Ապարանից վանքերու մէջ (Վ.Վ.Վ. Բ., էջ 565 եւ Հանդ. Ամս. 1943, էջ 66):

դ. Պատարագներ. Վանքերու մուտքի աղբիւր կարելի է նկատել նաեւ տարեկան պատարագներն ու կրօնական ուրիշ յանձնառութիւններ (հմմտ. Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտութեան յեղարկեստի ինստիտուտի 1927, էջ 60, 63 հմմտ. Ս. Սահակի կանոններ՝ Լ. եւ ԽԳ. Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 37, հմմտ. դեռ Պարտաւի Է. կանոնը, անդ, էջ 167):

ե. Վանականներու աշխատանքներ. Վանականներու մտաւոր եւ նիւթական աշխատանքներու (ուսուցչութիւն, գրչագրութիւն, կրօնական պաշտամանքներու կատարում, այգեգործութիւն, մշակութիւն եւն եւն) հատուցումը վանքին պիտոյքներուն կը յատկացուէր:

գ. Վանականներու ստացումքներ. Միւլիթար Գօշ կը շեշտէ՝ «Ապա եթէ կրօնաւոր իցէ վախճանեալն ի վանս, ըստ մարմնոց եղբայր եւ այլ ազգատոհմս եւ կամ հայր մի՛ լիցի նորա ժառանգ, այլ հոգեւոր եղբարք եւ հարք...», նոյնը կ'արժէ եւ «Հաւատաւոր» կնոջ համար (Գատաստանագիրք, էջ 83):


28. ՎԱՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ.

Վանականներու աշխատանքով ու տրնտեսագիտութեամբ, նաեւ անոնց խնայողութեամբ, ժողովուրդի եւ իշխանականներու նուէրներով ու նպաստներով, դարձեալ տուրքերով ու հաւաքումներով՝ Վասպուրականի վանքերը գրեթէ անխտիր դրամի, կալուածի եւ հողի, գիւղի եւ թեմի տիրացան: Իւրաքանչիւր վանքի վրայ խօսուած ատեն անոր նիւթական կարողութիւնը նկատի առնուեցաւ, սակայն կ'արժէ հոս անոնցմէ մաս մը յիշեցնել եւ կրկնել տեղիքներու յաւելումով:

Լիմ շատ կալուած եւ գիւղ ունէր եւ սակայն ոչ ցանցառ անգամ նիւթական նեղ

⁷⁶ Վանքերը ունէին նաեւ իրենց «Աւետարան»ները (հմմտ. Արեւելք, 1893, Թ. 2801՝ «Քօչական Աւետարան», հմմտ. Վ.Վ.Վ., էջ 246՝ «Քօչահան»):

կացութեան մատնուելով դրամ ու նպաստ հաւաքելու կը ստիպուէր (Վ.Վ.Վ., Ա., էջ 46—47, հմմտ. դեռ Աշխատանք, 1914, Թ. 34—180, Վան-Տոսպ, 1914, էջ 313, Զարհանալեան Հ. Գ., Հայկ. Մատենագիտութիւն, էջ 182): Նոյնը կրկնելու է եւ Կտուցի մասին (Վ.Վ.Վ., Ա., էջ 82—83, Հայրենիք, 1894, Թ. 800, Նոր Հոսանք, 1914, էջ 87, Սէր. 1861, Թ. 22, էջ 229. Մասիս 1884, էջ 292—294, Բիւզանդիոն, 1898, Թ. 502): Նմանապէս հարուստ էին՝ Աղթամարի, Նարեկի (Նոր Հոսանք 1914, էջ 568, Ա-Դօ՞ Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան 1912, էջ 5 եւ 58, Մասիս 1886, էջ 308, Մեղու 1864 (էջ 143),



Ս. Բարթուղիմէոսի վանքը

Վարազի, Ս. Բարթուղիմէոսի, Ս. Կանան, Ս. Թովմասի, Լուսապտուղ Ս. Սահակի, Սալնապատի (հմմտ. Նոր Հոսանք 1913, էջ 12—13 եւ 1914, էջ 400), Մեծոփի, (որուն հողերը Քիւրտերը կը բռնազրաւեն. հմմտ. Աշխատանք 1912, էջ 1087), Ս. Թադէի (որուն թեմը շատ տարածուն էր, հմմտ. Աղանեանց, Դիւան, Գ. էջ 803), Նախավկայի (հմմտ. յափշտակութիւն եւ գողութիւն, Արարատ. 1892, էջ 1117) եւ ուրիշ շատ մը վանքեր⁷⁷:

Կալուածներու եւ գոյքերու, նաեւ իրաւասութեան նկատմամբ Վասպուրականի վանքերը դժբախտաբար երբեմն իրարու հետ վիճարանութիւն կ'ունենան եւ վերին մարմինները կը ստիպուին հարցերը լուծելու միջամուխ ըլլալ: Չեմ կարծեր թէ սիրով

գործադրուած ըլլայ Վաչականի կամ Աղուանից ժողովի Զ. կանոնը՝ «Եթէ վանաց երկրները բազումը են եւ ժողովուրդը սակաւ եւ այլ վանաց ժողովուրդը բազում են եւ երկրները՝ սակաւ, ի բազում ժողովուրդէն առցեն եւ տացեն վանացն, որոց երկրները շատ են» (Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 194):

29. ԵԼՔ

Վանականը, որ վանքի մէջ կ'ապրի, կեանքի շարունակութեան եւ մտքի զարգացումի համար պէտք է ծախք ընել: Կալուած ու տուն՝ դնումի եւ պահպանութեան համար կա՛մ փոխանակութիւն եւ կա՛մ փոխարժէք դումար կը պարտադրեն: Ստէպ անակնկալ դէպքեր ու դժբախտութիւններ, նաեւ անհաշիւ ու անխոհեմ քայլեր, շոյլութիւններ, թշնամական արարքներ ու խաբէութիւններ՝ փնաս եւ նեղ կացութիւն կը ստեղծեն:

Աւելորդ է հոս ծանրանալ Վասպուրականի վանքերու օրուան ու կեանքի պահանջի էլքերու մասին, անոնք բնական են: Նմանապէս չ'արժեր խօսիլ որ՝ երբեմն անհողութեամբ եւ սխալ հայեցողութեամբ փնասներ եւ էլքեր յառաջ եկած են:

Վասպուրականի վանքերու էլքը կը կազմէին՝ հողերու եւ կալուածներու գնում, շէնքերու կառուցում եւ վերանորոգում, պաշտօնէութեան ամսական եւ նմաններ:

Անոնց անբաղձալի էլքի՝ աղքատութեան եւ դրամական նեղ կացութեան պատճառ եղած են քալաւուժներ եւ աւերումներ՝ մարդկանէ եւ նմանապէս բնութենէ, երկրաշարժէ (հմմտ. Առ. Դաւրիթ. Պատմ., էջ 492 եւ Վ.Վ.Վ., Բ., էջ 473):

Չեմ կարծեր թէ Վասպուրականի մէջ կարելի ըլլայ մատնանշել վանք մը, որ նախորդ դարերուն եւ մանաւանդ ժԹ. ու Ի. դարերուն՝ թալանումի, կողոպուտի եւ փրկուածի ենթարկուած չըլլայ: Վանքերը թշնամիին յափշտակող ձեռքը եւ քանդիչ գործիքները իրենց վրայ կը բերէին, վասն զի գոյքերով հարուստ էին, կալուածներով ճոխ եւ ստէպ՝ հայ ժողովուրդը անոնց մէջ ապաստանարան կը փնտռէր եւ այսպէս ոսոխին աչքն ու սլաքը ակամայ վանքերու վրայ կը բեւեռէր: Դարձեալ հակառակորդը անոնց քանդումն եւ ոչնչացումը կը ցանկայ եւ կ'իրագործէ, վասն զի զանոնք քրիստոնէութեան ամրոցներ կը նկատէ եւ մահմե-

⁷⁷ Միւրթար վարդապետը՝ «Հայերը Ռուսաստանում» անուն իր երկին մէջ (տպ. Վաղարշապատ 1906) Կարմիր, Յոնայ Ս. Ստեփանոսի եւ ուրիշ վանքերու հողերու պատկերը կը ներկայացնէ:

տականութեան յառաջխաղացումի եւ տարածումի դէմ՝ խոչ ու խուժ: Եւ զանոնք ոչ թէ միայն կը քանդէ, այլ եւ մղկիթի, շտեմարանի, գոմի եւս կը վերածէ:

Ունկնդրենք յիշատակագիրներու ձայնն ու կականը:

Ճառընտիրի մը մէջ Լէնկիթիմուրեան արհաւիրքները կը նկարագրուին՝ «Ժամանէին յեկեղեցիս, տապալէին զսեղանս, այրէին զդրոնս, պղծէին զտաճարս, խորտակէին զտուփս խնկոց եւ հաղորդաց, ուրացուցանէին ի հաւատոց եւ ապա սպանանէին, ի սով սաստկութեան սովացուցանէին մինչ զի զշուն, զկատու, զէշ, զձի, զհեղձուկ, զմուրտառ, նաեւ զսիրտանունը զաւակսն խորովէին եւ ուտէին» (Արարատ, 1911, էջ 763):

Նարեկի մը յիշատակագրութեան մէջ կը կարդանք՝ «Գրեցաւ սայ ի թուականիս Հայոց յութհարիւրերորդի քառասներորդի ի քաղաքս, որ կոչի Վան ընդ հովանեալ Տիրամար սուրբ Աստուածածնիս... այնց չար էր ժամանակս որ ի չորս տարին բոլին զրեցի, զամէն վախտական կացինք ի կատարս լիւրանց՝ քաղցած եւ պանդուխտ: Եւ ամենքեան մեռեալ կենդանաւին ի յահէ Թամուրին, այլ ով կարէ զայն չարութիւն պատմել...:

Ով եղբարք խիստ վիշտ կրեցի,
Ձի անյարկենք ու աւուրքս ձմեռն,
Ու այլասեռինք յարուցեալ էին
Ի վերայ քրիստոնէից:
Շուն մի եկեալ Սորասանցի՝
Թամուր անուն միակողմի՝
Բարկութեամբ լցեալ լինի՝
Նման իժի եւ քարք աւձի:

Ձայն չարութիւն որ նա գործեց՝
Ձայն ո՞ր լեղու պատմել կարի,
Թող հողածին մարդ չհայի
Ձինչ տեսաք մեք յայս ժամանակի:
Սուղ մեծ եկեալ Հայոց աղղի,
Ձի նա յազդէն Մուխանաթի
Ձալատ եհան նա Ղզուիցի
Կաշառ երես բազում ոսկի՝
Թէ ով ոք գճրիստոս Աստուած ասի՝
Բազում չարչարանաւք չարչարեցի,
Ոչ թէ տանջի՝
Այլ առ ժամայն գլխատեսցի:

Թէ այնց որ դուք լսէք կաշառի՝
Նա ձեր գլուխդ առ իս բերուի,
Այլ զինչ Գրիստոս անուն լինի՝
Ամէն ի սուր սուսեր մաշի:
Նոքա առին սուր երկսայրի
Շրթին քան զշուն կատղած յերկրի,
Որ խոստովանէր զՀայր եւ զՈրդի՝
Աստուած անմահ Տէր կենդանի,
Կոտորեցին անխնայելի
Ձազգս Հայոց եւ զՎրացի
Շատ քահանայք առաքինի
Սարկաւազունք հեղահոգի,
Ճգնաւորք յանապատի,
Ձամէնն ի կեր տուին սրի:

Շատ քակեցին եկեղեցի
Եւ վանորայս ուխտատեղի,
Այլ եւ զերկիրս Վասպուրականի
Քան զամէն տեղ խիստ աւերի,
Առնու գեղեակն զՎան քաղաքի.
Չողորմի մեծի եւ ոչ փոքրի
Ձամէնն ի բերդն ի վայր ձգի
Ու զմնացեալսն զերի տանի.
Չչարութիւն Թամուրի
Ո՞ր հողածին պատմել կարի:

(Ա.Կինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 1874:)

Դարձեալ՝ 1606ին նորոգուած Աւետարանի մը մէջ արձանագրուած է՝ «Նորոգեցաւ աւետարանս... յայսմ ի դառն եւ նեղ ժամանակիս, որ բազում վիշտք եւ նեղութիւնք եղաւ, հեծեալչարժութիւն եղաւ: Ուսումնս եւ Կարմիր գլխակն վրայ մէկ մէկի զնաց, բազում աշխարհ աւերեցին. յէնց աւերութիւն եղաւ եւ կոտորում, որ չէ յիշելիք, ի սկզբանէ մինչեւ ցայժմ չէր եղեալ, վա՛յ մեզ Ռ. բերան, որ էնց բաներ տեսանք: Կարմիր գլխակն եկաւ ի վերայ Վանայ, բազում կոտորում արաց հայ ու տաճիկ, բազում քահանայք, բազում զերիք տարան, որ թիւն ու համարն չիմացանք... խիստ սով եղաւ» (Ղալսեանց, Յուց. Հայ. Ձեռ. Վասպ.ի, էջ 257—258. հմմտ. անդ դեռ էջ 611—614 եւ Արարատ, 1911, էջ 762, անդ, 1915, էջ 72—74):

Այսքանը բաւ է: Արդէն նոյն իսկ շատ եղաւ: Այս դժբախտ դարերու վանքերու աւերումները — ուստի եւ էլքերը — կը դարձանունին մեծ մասով: Նաեւ կարելի կ'ըլլայ 1895—1896 դժբախտադոյն տարիներ-

րու աւերները⁷⁸ գոնէ փոքր մասով մը դարմանել, սակայն ամէնէն դժբախտ տարիներու (համաւերական առաջին պատերազմի շրջանին) սոսկալի փլուզումները եւ աւերները⁷⁹ դեռ մինչեւ այսօր կը մնան անդարմանելի. վասն զի չմնաց այլ եւս շինարար վաստակակնցի Հայ մը...

Այս տեղ կը վերջանայ մեր ուսումնասիրութիւնը⁸⁰:

(Վերջ:) Լ. Լ. ՈՍԿԵԱՆ

ՆՈՐ ԿՏՈՎԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ ԿՈՐԻՍԿԱՆԻ ԿՈՐԻՍԿԱՆ ԳՐԱՅԻՆ ԿՈՐԻՍԿԱՆ ԳՐԱՅԻՆ

(Շարունակութիւն եւ վերջ:)

Բ. Պաղտատեան:

Ժ. Թուղթ: Կորեան վերի վկայութիւնը «Իսկ Պաղտատի չորեքասանեֆուրթ թղթովք» կը յայտնէ թէ Հայոց քով Պաղտատեան 14 թղթեր կը ճանչցուն: Այս թիւը այնքան ընդհանրացած է, որ ինչ ինչ հեղինակներ միայն «Ժ. Թուղթ» կը կոչեն, առանց Պողոս անունը յիշելու: Գործնականին սակայն Հայոց քով ճանչցուած են 15 թղթեր, ինչպէս կը գտնենք Եւագրի քով «Առաքելայն ժե»⁹⁵: Այս 15րդ թուղթն է «Կորնթացոց Գ. թուղթ» անուանուած անկանոնական դրութիւնը, որուն մասին ստորեւ պիտի անդրադառնանք: Զեռագրական սխալ ընթերցում մը պիտի ըլլայ Աբրահամեանի հրատարակութեան Շիրակացոյ ցուցակին մէջ «Պողոսի առաքելոյ թուղթ Ժ. Գ.» ընթերցուածը (էջ 259) որովհետեւ գործնականին Ժ. Գ. թուղթ յառաջ կը բերուի: Ուշագրութեան արժանի է Լաւորիկեայ ժողովոյն ցու-

⁷⁸ Վաստակակնի ամայացած ու շարթացած՝ Աստիւրնիկայ եւ Ուրնիկայ Ս. Նշանի վանքերու մասին համար. Բիւզանդիոն, 1900, Թ. 1074 եւ 1196:
⁷⁹ Հմմտ. Ամէնուն Տարեցոյց (Թէոդիկ), 1926, էջ 196 եւ «Վաստակակն» 1930, ամբողջ գիրքը, հրատարակող Վաստակակնի Ապրիլեան հերոսամարտի տասնհինգ ամեակի առթիւ, 1915—1930:
⁸⁰ Մանոթ էր մեղ Է. Կ. Ամատունի «Fonti, Serie II, Fascicolo XII, Disciplina Armenia II, Monachismo, studio storico-canonico e fonti canoniche, Venezia 1940 գործին հրատարակութիւնը եւ ջանք չինսպուստուարու զայն օր յառաջ ստանալու, սակայն աննպաստ պարագաներու հետեւանքով դժբախտաբար մեր գործին տպագրութեան գրեթէ անարտուածին հասաւ Վիեննայ: Այս շահեկան եւ ընտիր գրութիւնը կրնար մեր ուսումնասիրութեան ատեն շատ օգտակար ծանայութիւն մատուցանել:
⁹⁵ Աբարատ, 1895, 408:

ցակը, որ հայ ձեռագիրներու մէջ բաւական մեծ փոփոխակներով աւանդուած կը գտնենք: Զեռագիրներէն ոմանք Պաղտատեան թղթերը թուելէն յառաջ «Պաղտատի թուղթ»-ին վրայ կը յաւելուն «Ժ. Գ.» եւ իրապէս 14 թուղթ կը հաշուին⁹⁶: Ուրիշներու քով չենք գտնիր այս յաւելուածը բայց կը պակսի այս կամ այն թուղթը անոնց ցուցակէն: Մեյլք Թանգեանի ընդգրկին մէջ կը պակսին Թեսաղոնիկեցոց Ա. եւ Բ. եւ Երբայեցոց թղթերը: Մեր Մատենադարանի Թ. 581 եւ 810 ձեռագիրները Թեսաղոնիկեցոց միայն մէկ թուղթ կը հաշուեն, եւ մինչ առաջինը Մեյլք-Թանգեանի ընդգրկին պէս կը զեղչէ նաեւ Երբայեցոց թուղթը, երկրորդը կ'աքտաքսէ Եփեսացոցը: Յունարէն ընդգրկը յայտնի 14 թուղթ կը յիշէ: Այս երեւոյթին առջեւ միայն ձեռագրական սխալ ընթերցում կարելի է համարել ամբողջ եղելութիւնը, որովհետեւ թղթերուս անվաներ համարուած ըլլալու կասկածներ չենք գտնիր մեր մատենագրութեան մէջ:

Գիրքը: Վերը ստուգեցինք արդէն թէ Պաղտատեան թղթերը հնագոյն խմբագրութեան եւ հայ ընտրելագոյն ձեռագիրներու համաձայն կը յաջորդեն կաթողիկէ թղթերուն: Այս տիրոջ կարգէն դուրս կան նաեւ քանի մը սակաւադէպ շեղումներ:

1. Պաղտատեանները Աւետարանի յաջորդ: Սիւնեցի, Աղարիս: (Լատին ազգեցութիւն):
2. Յայտնութեմէ ետք: Ձօհրապի ընդգրկը, [Շիրակացի]:
3. Յովհաննու Հանգիստէն ետք: Սարկաւագ, Ստ. Զիք: Ճաշոցը կը հետեւի հին խմբագրութեան, եւ յինանց շրջանի կաթողիկէ թղթերուն կը յաջորդեն Պենտեկոստէոֆ Պաղտատեանները: Ներքին դասաւորութիւն: Պողոս առաքելի թղթերը չորրորդ դարուն արդէն վերջնական դասաւորութեան մը ենթարկուած էին, որուն համաձայն նախ կը կարգուէին հասարակութիւններու, եւ ապա անհատականներու ուղղուած նամակները: Շատ հեռաւոր վայրեր պիտի առաջնորդուէինք այս դարգացման փուլերու ըննութեամբը, ուստի կը բաւականանանք հաստատելով թէ մեր հայ թարգմանիչները առանց ընդվայր յաճելու նոյն դասաւորութիւնը կ'ընդգրկեն իրենց Ս. Գրոց թարգմանութեան համար:

⁹⁶ Հմմտ. Տաշեան, Ցուցակ, էջ 370. Ձեռ. 100, թղ. 125ա:

| | |
|------------------|--------------|
| Հասարակական | Անհատական |
| Հոովմայեցոց | Տիմոթէոսի Ա. |
| Կորնթացոց Ա. | Բ. |
| » Բ. | Տիմոթի |
| Գաղատացոց | Փիլիմոնի |
| Եփեսացոց | |
| Փիլիպեցոց | |
| Կողոսացոց | |
| Թեսաղոնիկեցոց Ա. | Բ. |
| » Բ. | |
| Երբայեցոց | |

Այս դասաւորութիւնն ունին բոլոր հայ ձեռագիրները, Հայոց ծանօթ օտար ցուցակները եւ նոյնպէս կը դասաւորեն ազգային հեղինակները:

Պաղտատեան թղթերու այս ցուցակը կրած է սակայն բանասիրական վերլուծում մը Գէորգ Կաղի եւ Սարկաւագի քով, որոնց աղբիւրը կը գտնենք Ոսկերեանի Հոովմայեցիւրը կը գտնենք Ոսկերեանի մէջ: Այս ցուցակը որ իրապէս նորանշան երեւոյթ մ'ունի, եւ որ այնքան դժուարութիւններ պատճառած է Zahnի⁹⁷, ցանկ մըն է, կազմուած թղթերու դրութեան ժամանակագրական կարգով:

- | | |
|---------------------|------------------|
| 1. Թեսաղոնիկեցոց Ա. | 8. Տիմոթի |
| 2. » Բ. | 9. Գաղատացոց |
| 3. Կորնթացոց Ա. | 10. Եփեսացոց |
| 4. » Բ. | 11. Փիլիմոնի |
| 5. Հոովմայեցոց | 12. Կողոսացոց |
| 6. Տիմոթէոսի Ա. | 13. Փիլիպեցոց |
| 7. Երբայեցոց | 14. Տիմոթէոսի Բ. |

Ոսկերեան իր այս ցուցակը կը հիմնաւորէ այսպէս. «Ոչ որպէս ոմանք կարծեն թէ սա (Հոովմայեցոց թուղթն) յառաջ է քան զամենայն թուղթն առաքելոյ, այլ քան զնոսա միայն որ ի Հոովմայն գրեցան: Իսկ քան զայսն կրտեր, թէպէտ եւ ոչ քան զամենայն: Քանզի Կորնթացոց Բ. թուղթն յառաջ է քան զսա, եւ յայտ անտի է, զի մօտ ի կատարած թղթիս ասէ. Երթամ պաշտել յսուրբան որ յերուսաղէմ. եւ թէ Հաճոյ զսուրբան որ յերուսաղէմ. եւ Աքայեցոցն թուեցաւ Մակեդոնացոցն եւ Աքայեցոցն հազորդութիւն առնել ընդ աղքատս սրբոցն որ յերուսաղէմ: Ուստի յայտ է թէ քան զԿորնթացոցն Թեսաղոնիկեցոցն յառաջ է եւ առաջին քան զամենայն թուղթն...» են (Ձեռ. 47, թղ. 171ա, բ):

Ոսկերեանի եւ Գէորգ Կաղի ցանկերու մէջ միայն Տիմոթէոսի Ա. եւ Երբայեցոց թղթին դասաւորութեան մասին կայ տարա-

⁹⁷ Forschungen, էջ 150:

ձայնութիւն մը. «Այլ զի ասի թէ Տիմոթէի առաջին թուղթն յառաջ գրեցաւ քան զԵրբայեցոցն, ո'չ է ի դէպ, զի Տիմոթէոս դեռ ընդ Պաղտատի էր եւ ոչ առաջնորդ յեփեսոս յորժամ գրեցաւ Երբայեցոց թուղթն: Եւ ինքն Տիմոթէոս տարաւ ի Պաղտատ զթուղթն Երբայեցոց եւ յորժամ եկն Տիմոթէոս ի Հրէաստանէ, յայնժամ կացոյց զնա Պաղտատ յեփեսոս քահանայապետ: Եւ ելեալ յիտալիայէ յայսմ վայրի քարոզեաց Գաղատացոցն եւ Կողոսացոցն: Եւ զնացեալ անտի ի Կրիտէս կղզին, քարոզեաց նոցա զՅիսուս Գրիստոս, եւ կարգեաց առաջնորդ զՏիմոթէոս: Եւ եկեալ անտի առ Պատմենացիսն Հանց վերստին յաշտարէն Փիլիպացոց եւ ի Լաւորիկի գրեաց զառաջին թուղթն Տիմոթէի» (Ձեռ. 47, թղ. 169ա, բ): Այսպէս Գէորգ Կաղ: Նորագոյն ըննութիւններու համաձայն այս դէպքին իրաւունք ունէր Գէորգ Կաղ այս փոփոխութիւնը կատարելու, որովհետեւ Երբայեցոց Ժ. 24 վկայութեան «Ողջոյն ասան ձեզ, որ ի կողմանս Իտալացոց են» կը հետեւի թէ թուղթս՝ Հոովմէն գրուած է: Նոյն վերջապիւրը ունի նաեւ Եւթաղ «Առ Երբայեցիս գրեցաւ յիտալիայ ի ձեռն Տիմոթեայ» (էջ 154):

Հայ ընկալեալ խմբաւորումին հակառակ, լատին ազգեցութեան տակ, Ոսկանի եւ Վիեննայի (1857, 1906) տպագրութիւնները Երբայեցոց թուղթը փոխադրած են Փիլիմոնի թղթէն ետք: Այս դասաւորութեան վարդապետական-պատմական դրդապատճառը թէպէտ անձանօթ չէր նաեւ արեւելք, նոյն իսկ Հայոց քով, քանի որ Երբայեցոց թղթին մասին եղած տարակոյտը գիտէին նաեւ Հայերը Ս. Յերոնիմոսի Prologus Galeatusէն⁹⁸, եւ առաւելապէս Եւթաղի նախադրութեանէն «Երբայեցոց թուղթն թուի թէ չիցէ Պաղտատի գրեալ վասն նկարագրին եւ վասն ոչ ի գլուխն կարգելոյ զիւր անունն որպէս եւ յայլ թուղթն» (էջ 144): Սակայն ներքին չի կրնար համարուիլ այսպիսի ներմուծուած փոփոխութիւն մը, որ կը խղճէ հնութեան հետ ամէն կայ:

Ճաշոցի կարգը կը համաձայնի հասարակ ցուցակին հետ, ինչորի առարկայ կը մնայ միայն Փիլիմոնի թուղթը:

⁹⁸ Ex catalogo scriptorum ecclesiasticorum: Epistola autem quae fertur ad Hebraeos non eius creditur propter styli, sermonisque distantiam.